ISSN 0320-8117

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК ОБЩЕСТВЕННЫХ НАУК

Սակայն, եթե Մ. Բարխուտարյանցի սխալն անմեղ ու անշահ մի բան է, նրան կրկնողներից շատերը (հատկապես Զ. Յամպոլսկին, ապա Զ. Բունիաթովը) զարգարներին և ուտիներին Արցախում նստեցնելուց հետո էլ նրանց կնքում են աղվաններ, աղվաններին՝ հին ադրբեջանցիներ։ Եվ ստացվում է այնպես, որ Արցախը հենց այն գլխից հին ադրբեջանական մարզ է եղել։ Որանից հետո էլ սկսում են հորինել պատմություններ այն մասին, որ, իբր, արաբական տիրապետության ժամանակ Հայաստանից «արտաքսված» հայերը թափանցել են Արցախ և ասիմիլյացիայի ենթարկել տեղի բնակիչ աղվանական ցեղերին։

Կարկառ գետը հոսում է Արցախի Վարանդա գավառով, այժմ՝ ակունքներում Շուշվա շրջանն է, ստորին ավազանի մասը՝ Մտեփանակերտի շրջանը։ Այն երբեք Գարգար չի կոչվել ո՛չ պատմական աղբյուրներում և ո՛չ էլ արցախցիների լեզվում։ Հին ու նոր արցախցիներն իրենց գետը հիշում են որպես Կարկառ, որ հայերեն բառ է և նշանակում է քարքարոտ։ Կարկառ գետի անունը հենց այդպես էլ բացատրում էր հայտնի կովկասագետ Կ. Գանը[26], ճիշտ

ամենամեծն են համարում Արցախի բարբառը։ Նրա սահմանները կը փռվին հյուսիսեն մինչև Կովկասի վերջին ծայրերը, հարավեն մինչև Թավրիզ, արևելքեն մինչև Կասպից ծովին եզերքները, արևմուտքեն Սևանա լիճը և Երևանի ու Կարնո բարբառներուն սահմանագիծը[1]։

Արցախ-դարաբաղյան բարբառի տարածման սահմաններին մեջ կմնան Մեծ Սյունիքը, Արցախը (Փոքր Սյունիքը), Փայտակարանը և Ուտիքը (Կիրովաբադն ու շրջակա հայաբնակ վայրերը), այսինքն՝ Հայոց Ադվանքը, հայկական էթնիկական մի անտրոհելի սմբոզգությունն, որի զգայի մասը չնայած չորրորդ դարի վերջից՝ երբեմն կտրվում էր ազգային մայր միջավայրից, սանրբպանվում աշխարհագրական-քաղաքական հազար ու մի արգելափակով, սակայն չէր կորցնում իր հայկական ընդհանուր նկարագիրը։

Պատմական գիտությունն աչք է բացել ու Արցախը տեսել հայկական, ելնելով պատահական չէ, որ Արցախի նախահայկական շրջանի մասին չկա պատմական ոչ մի վկայություն։

*

Հիմա զառնանք այն հարցին, թե Մեծ Հայքի Արցախական աշխարհի հայությունը ե՞րբ է կազմավորվել էթնիկորեն, և ո՞րն է նրա բարբառի զարգացումը.

Ահա հույն խոշոր աշխարհագետ Ստրաբոնը։ Մեծ Հայքի կենտրոնական գավառները թվարկելուց հետո նա գրում է. «Հայաստանի կազմի մեջ են մտնում նաև հետևյալ մարզերը. Փավիանա, Կոմիսենան և Օրխիստինան. որը (Օրխիստինան—Ռ. Բ.) հանում է մեծաքանակ հեծելազորս»[64]։

Օրխիստինան Արցախն է։ Ստրաբոնի վկայության թանձրությամբ այս եզրակացության է հանգել բանասեր Ա. Մնացականյանը[65]։

Խորենացին, սակայն, հաղորդում է մի ուրիշ ավելի կարևոր տեղեկություն, որով, թեպետ և բավականին ուշացումով, հաստատվում է Մտրարոնի վկայությունը Հայաստանի ամբողջ տերիտորիայում գործածվող մեկ ընդհանուր լեզվի՝

Վաղարշակ թագավորն իր պետության սահմանների մեջ առավ հայկական լեզվի ընդգրկած գավառները, բոլոր այն տերիտորիաները, որոնց բնակիչները խոսում էին հայերեն։ Վաղարշակի կուսակալներից մեկը՝ Սիսակ անունով, ինչպես հայտնի է, կարգվեց Արաքսի ու Կուրի միջագետքի վրա, և այս երկիրն էլ Նրա ազգ (քաղցր, անուշ) վարքի պատճառով ստացավ Աղուանք անուն[70]։ Եվ Սիսակի ժառանգ Առանի անվամբ էր, որ այս երկիրը կոչվեց նաև Առան։

թյունը։ Արցախն ինչո՞վ էր այլբանական, եթե Մեծ Հայքի պետության կազմավորման առաջին իսկ շրջանից նրա մեջ էր և նրան էր պատկանում, եթե Ստրաբոնի ժամանակ, երբ Այլբանական 26 տարբեր լեզուներով խոսող 26 տարբեր ցեղերի թագավորները նոր-նոր սկսել էին ենթարկվել մի թագավորի և այն էլ Կուրից հյուսիս, իսկ Արցախը Կուրից հարավ արդեն ոչ միայն Մեծ Հայքի մեջ էր, այլև խոսում էր հայերեն, ընդգրկված էր «հայոց խօսիցս անցնելի սահմանների մեջ»

Մի ուրիշ հանդամանք ևս, որ վկայում է քրիստոնեության մուտքի ժամանակից և առհասարակ գրավոր հայերենից առավել վաղ շրջանում գոյություն ունեցած արցախական հայերենի մասին։

Դեռևս V դարի առաջին կեսի մեր մատենագիրների գործերում Արցախը մեծ մասամբ ներկայացված է որպես պաշտպանական ուժեղ կենտրոն։ Եղիշեն պատմում է, որ Վարդանանց պատերազմի ողբերգական ավարտից հետո հայ ազնվականությունը և հատկապես կանայք փափկասունք պաշտպանվում էին Արցախում[92]։